

Նախագահ
Ռասսել Մ.
Նելսոն

# Օգնել ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ գործին

1820թ. Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին: Երկնային Հայրը ասաց. «Սա է Իմ Սիրեցյալ Որդին: Լսի՛ր Նրան»: Ավետարանի Վերականգնումը սկսվեց այդ օրը՝ 200 տարի առաջ: Այն շարունակվում է այսօր:

Մի օր Հիսուս Քրիստոսը կրկին աշխարհ կգա: Ահա չորս եղանակներ, որոնցով դուք կարող եք օգնել Վերականգնման գործին և պատրաստվել այն ժամանակին, երբ Հիսուսը կվերադառնա.

- Կառուցեք ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ:
- Գտեք ձեր նախնիներին և օգնեք կատարել տաճարային աշխատանքը նրանց համար:
- Պատրաստվեք գնալ տաճար:
- Օգնեք մարդկանց սովորել Հիսուս Քրիստոսի և Նրա Եկեղեցու մասին:

Կատարելով այս գործերը՝ կօգնեք պատրաստել աշխարհը այն հրաշալի օրվան, երբ Հիսուսը կրկին կգա: ●





Վերցված է «Իսրայելի հույսը» ելույթից (երիտասարդների համաշխարհային հոգևոր հավաք, հունիսի 3, 2018),19, HopeOfIsrael.ChurchofJesusChrist.org:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՔԵԹԻ ՍԱԿԻՐԻ

Նախագահ Նելսոնը ասաց, որ երեխաները կարող են օգնել Վերականգնման գործին: Ո՞րն է այն եղանակը, որով դուք կարող եք օգնել: